Թ. ԱՌԱԿՆԵՐ ԵՎ ԵՐԴԻԾԱԿԱՆ ՉՐՈՒՑՑՆԵՐ

1. ԱԳՌԱՎ ՈՒ ԲԼԲՈՒԼ

Օր մե աղռավն ըսեց բլբուլին.
—Էբթանք մարդու մոտ ապրինք։
—Ես,—ըսեց բլբուլ,—ընդոր մոտ իմ ու ընդոր մոտ, դու ղբու դարդ լաց։
—Ապա ի՞մալ էնիմ։
—Է՞,—ըսեց բլբուլ,—քանի քու կռկռոց կա՝ մարդ քըղի չընդունե։

2. ԱԽՄԱԽ ՈՒ ԽԵԼՈՔ

Ախմախ մեկ կըսեր.
—Ես զկղի թագավորն իմ, կնիկսի՝ թագուհին։
Խելոք մե պատասխանեց.
—Օդո՛րդ է, դու օր չէղնիք՝ մըշ դեղի նախիրին էրկու էշ կը պակսի։

3. ԱԽՄԸԽԻՆ՝ ԽՐԱՏ

Ախմըխին հա՛ կը խրատեն.
—Ախպե՛ր,—ըսեց հալվոր մե,—ախմըխուն խրատն է՛ն է, ինչ մարդըրիտ խոգի յառեջ։ Հեղ մե հոտ քաշեց՝ կը թողե գմարդրիտ, օր էլման ուրին թալե աղբընոց։

4. ԱՄԵԿՈՒ ԼԻԴՐ Ո՛ԻՐ ԳՈՐԱ Է

Ճնճուղ միամիտ կաներ էր տեղ մե, ուրինուրին կը խաղեր, մարդ մե յետևանց կը մոմոտենա, կենե՝
—Փը՛խկ։
Ճնճուղ կը խոտի, կըսե.
—Տնաշենի մարդ, էդ ի՞նչ էր էրիր, հմալ վախեցա օ՞ր, լիդր մե ճրագու հալըցուցի։
Մարդ կըսե.
—Ճնճո՛ւղ, դու տաս գրամ չըկաս, լիդր մե ճրագու ի՞մալ հալըցուցիր։
—Ա՛խպեր,—կըսե ճնճուղ,—յորի՞ն կը դարմանաս, ամեկու լիդր ո՛ւր գորա է։

5. ԱՆԲԱՆ ԿՆԻԿ

Մարդն ուր կնկան կըսե.
—Կնի՛կ, զիմ շորեր լվա։
Կնիկ թե՝
—Շաբթու վեց օր չըմ կռնա, կիրակի լե դաթի մարդ դործ չէնե։

6. ԱՆԴԵՏ ՃԱՄՊՈՐԴ

Բեղ ու մուրքով մարդ մե հարցուց.
—Պղտի՛կ, պղտի՛կ, իդա ճամպեն դո՞ր կէրթա։
—Ջուրի յոնի, օր կը վեռչանա։
—Վեռչն ու՞րտեղ է, դեղ կա՞։
—Թե էղնի՝ կա, չէղնի՝ չկա։
Մեծորեք ըսեր ին.—Պղտկից ճամպա հարցնողն անգետներու անգետն է։

7. ԱՆԽԵԼՔ ԱՂԵՆ

Աղե մե տրսնուհինդ օսկի կը կորցու, դալալ կէցկե յառջև ուրին, կիտա կանչել.
—Աղեն տրսնուհինդ օսկի է կորցուցի՞. գտնող թըղ բերե տա՞, թե չէ՝ աղի խաթր կը կոտրի՞, հա՞։
Աղեն լե դալալի յեսևից ձեն կիտա.
—Մինակ խաթր չը կոտրի՞, կը խոովի լե ձըղնե՞։

8. ԱՆՈԹԻ ՄՇԱԿ

Տան մշակ ջատ անոթի կէղնի։ Ճաշի դա կէղնի, հմա կը քաշե տան տիրոջ ճաշն ուր յառեջ, կուտե, բեղեր, կը սրբե, կը կանի մեկ դեն։
Աղեն գիկա օր ճաշե, կը տեսնա ճաշի աման դարտակ, հացի փշուր լե չը մանցեր է։
—Իմ ճաշ ո՞ն կերավ,—կը հարցու։

—Նս սնուշ էրի։

—Իմա՞լ։

—Անոթի ենք՝ կերու։

—Տո՛, ես քո՞ւ...

—Քֆրիս, չը քֆրիս՝ ընձի համար մեկ է։ Էն առակաց խոսք չը լսե՞ր իս, օր կըսե.—Անոթի մարդու աչքին շեն աշխարն սվեր կէրեա։ Փա՞ռք ասու, աշխարն յըսօր իմ աչքին շեն է, ու շեն։

9. ԱՆՈԹԻ ՍՈՒԼԹԱՆ

Սուլթան Մուրատ խոնախ կէրթա հարուստի մե. ջոջ պասի օրեր կէղնի, սուլթան հրամանք կէնե, օր հաց ու կերակուլ տան ուրին։ Կերակուլի ժամանակ հարիր տեսակ զատ դելնա վըր սեղնին, յըմեն պասավուր։ Սուլթանն իշթայով կուտե, կը պրծնա, տանտիրոջ կըսե.

—Յըմնօր օր ընձի հմլա կերակուլ տան, տարին բոլոր պաս կը պահիմ։

10. ԱՇԽԱՐՀՆ ԻՆՉՈ՞Վ Է ՇԵՆ

Բրտի հալն հարցուցին, ըսեց.

—Տարին չորային էղավ՝ իմ քեֆին քեֆ չը հասնի. շատ սման կը ծախիմ, շատ փարա կու�։

Ռընչպարին հարցուցին, ըսեց.

—Թե տարին անձրևային էղավ՝ ցորեն շատ դիկտ, իմ նեղութեն կը հոգամ, մարդու ձեռ չերկընցում։

Ժողովուրդ կըսե.—Աշխարն է՛ն յապով է շեն, օր սմեն մարդ ուր խելքով ժաժ գիկա։

11. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՎՈՐ

Մարդ մե տաս օսկի կը գողնա, ղողութեն կը բռվի։

—Յորի՞ն գողցար,—կը ՝արցու դատավոր։

—Ի՞նչ ըսիմ, պատահավ, գողցա։

Դատավորն հինգ օսկի կիտա տիրոջ, հինգ կը դնե ուր ջեբ, գանգավորին կը ճամպըցու, կը դառնա գողուն։

—Անխե՛լք,—կըսե,—մեկ հավկիթ գողցող լե գող է, տաս օսկի գողցող լե գող է, վո՛լա, ըսկի չը էրթի բռնատուն՝ թե հարիր օսկի գողներ։

12. ԱՐԴԱՐԱԴԱՏ ՄՈԼԵՆ

Մոլի տավար գընկնա գրկեցի կանանչ արտ, կը փճացուն, արտի տեր կէրթա մոլի մոտ, կըսե.

—Մո՛լա, օր մեկի տավար յընկնա գրկեցի կանանչ արտն ուտին, գարկին զնտին ղցորնի բուս, շարիաթն ի՞նչ կըսե.

—Կնիկ,—կըսե մոլեն,—զէն պզտիկ Կանոն-նամին՝ տուր տեսնամ, ի՞նչ կըսե։

Մոլեն ղպզտիկ Կանոն-նամեն կիշկե, կըսե.

—Արտ փճացնողն պետք է զվնասն իտս արտատիրոջ։

—Է՞, մոլա,—կըսե գրկեց,—քու տավար զիմ կանանչ արտ կերած, տրորած, փճացուցած ին, ի՞նչ կըսիս։

Մոլեն ըսկի բանի տեղ չը դնե։

—Կնի՛կ, կնի՛կ,—կըսե,—զէն մեծ Կանոն-նամեն բի՝ տեսնամ։

Զմեծ դիրք կը բանա, կիշկե, կըսե.

—Դրկեց, մեծ Կանոն-նամեն լե հմլա կըսե՝ արտի տեր պետք է զուր արտ պահե, օր մուխթաթ չը մնա՝ Կանոն-նամեն զվնաս չը հասու արտատիրոջ։

13. ԱՐԾՎՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Հավք մե կըսեր արծվուն.

—Քըրի կը փնովին, պինա՞ս։

Արծիվն ըսեց.

—Գինա՛մ, ընձի չըն հասնի՝ է՛ն յապով։

14. ԲԱԽՏՆ ՈՐ ԿԱ՝ ԹԱՐՁԻ Է

Տղեն հարցուց պտպուն.

—Բախտն ի՞նչ է։

—Օրդի՛,—ըսեց,—բախտն օր կա՝ թարզի է, ամեն մարդու շոր ո՛ւր դորա կը կարե։

15. ԲՆՈՒԹՔԻՑ ԿԸ ՃԱՆՉՑՎԻ

Տղե մե կը հարցու պապուն.

—Մարդն օր ուր տեսք փոխե՝ կը ճանչըցվի՞։

Պապ կըսե.

—Տեսք փոխե՝ չը փոխե՝ մե՛կ է, մարդ բնութքից կը ճանչըցվի։

16. ԲՐՏԻ ՇՈՒՆ

Անոթի դել կը մտնա դեղ, օր բան մե ճանկե, շներ չորս դիեն կը թափին վրեն՝ ո՛ր յոաքեն, ո՛ր պոչեն, ո՛ր գլխեն՝ աղեկ մե կը գգին, լե յըմնուց բրտի շունն է օր գիլուն լաղաթ չիտա։ Գել կը դառնա, կըսե.

[1] Օրենքների դիրք (Ս. Կ.)։

—Տարա՛ն, տարա՜ն, քըզնե ի՜նչ տարան։
Շուն կըսէ.
—Գեղի վնաս՝ ըրածին լէ վնաս է, զքու գոս մը՛ մոռնա։

17. ԳԶՐԻ ԿՆԻԿ

Գզրի կնիկ՝ կնկտոց հպարտ-հպարտ կըսէ.
—Թու՜, իմ մարդ օր չը բոռա, անխելք գեղացիք գիմնա՞ն մըջ աշխըրին ի՛նչ գընց-նու-դառնա։
Կնիկ մե կը պատասխանէ.
—Օղո՛րդ է, գդիրն օր կը բոռա՝ ես մեր սատկուկ սև էշ միտ կը բերէմ։

18. ԳԻԼԱՄ ՈՒ ԿԷՐԹԱՄ

Աղջիկ մե նշանած են. գիկան տանելու, աղջիկ գիլա ու սնդըռտա, արտըսունք կը թափե։
Պապ կըսե.
—Աղջի, լա՛ո, օր գիլաս՝ մէ՛րթա։
Աղջիկը կըսե.
—Հա՜, տպա՜, չէրթա՜մ, հա՛մ գիլամ, հա՛մ կէրթամ։

19. ԳԼՈՒԽԳՈՎԱՆ ՊՈՒՏՈՒԿ

Տանտիկին զաման-չաման կը լըա, կը դնէ արևդեմ, օր չորնան. պուտուկն ուրին-ուրին կը զովա, կըսե.
—Ես ո՛չ ձձում իմ, ո՛չ կարաս, ո՛չ քասա. ո՛չ կոտիկ, ես պուտուկ իմ, իմ կավ մաղուկ ու չարմղուկ է, զիս խո մարդիկ ուրանց կոշտ ձեռքերով չըն շինած, զիսի խանըմ-խաթուն կնկտիքն ին շինած։ Օղորդ է, դրսանց սև ու մրոտ իմ, լե ներսևանց խալիս օսկի իմ։
Շերեփ լեզու դելնա, զջուար կիտա, կըսե.
—Տո՛, դառշելի գուշ սև սրաք, ջորի՞ն բառադա-բառադա կը ձավրիս[1], զգլուխդի կը զովաս, օր դու ներսևանց խալիս օսկի՜ իս, ասլա ես չի՞մ զքու տակն ու վերև խառնող-խուսող։
Գլուխգովան պուտուկ պատասխան չի կռնա տա, կը ղառնա յուհո՛ւ սեերես։

[1] Ձավրել—հիմար-հիմար խոսել, շաղակրատել (Ս. Բ.)։

20. ԳՆԱ՛, ԲԻ՛

Քրդու տղեն կը վաղե հոր մոտ, կըսե.
—Ապո՛, ապո՛, դեվա կը ծախին մեկ փարով։
—Փարա չկա,—կըսե հեր։
Գընդնա ժամանակ մե, տղեն էլման կը վաղե հոր մոտ, կըսե.
—Ապո՛, ապո՛, դեվա կը ծախին հալար խուռուշով։
Հեր կըսե.
—Հա՞, գնա՛, բի՛։

21. ԳՈՂ ՋՈՒԼՅԱԿ

Ջուլյակն ուր ղազդի վերև պղտիկ կողովմ՝ էր կախի, մուշտարուց մանած կը գողնա, կը դնե մըջ կողվին։
—Ուստա՛, մեր մանած պակսեր է, յորի՞ն պտի պակսի, չէ՞ օր կշռելով ինք տվի քըզի։
—Պակսեր է, թե չը պակսեր է, էնի ինա վերի՛ն դինա, ես խաբար չունիմ։
Ջուլյակ վըր վերի կողվին ջերդում կուտե, մուշտարիք դինան թե վերինի—աստծու վրեն ջերդում կուտե, կավտընան զողուն։

22. ԳՈՂՆ ՈՒ ՏԱՆՏԵՐ

Գող մե կը մտնա աղքըտի տուն. քոշա-պուճախ շատ կը ղտրկե, զարկըվի, բան չընկնա ի ձեռ, էդ է պտի էրթա, տան տեր կըսե.
—Տա՜ր, տա՛ր, չը տա՜նիս։
Գող կըսե.
—Դու զքու տան բարաքաթն ըսե. իմ բան տանելուն մ՚ո՛ւրխնա։

23. ԳՈՐԾ ՈՒ ԽՈՍՔ

Մեկ մե հարցուց իմաստունին.
—Մարդ ի՜մով կը ճանչըցվի։
—Գործով։
—Ի՞մալ։
—Էն օր մըջ գործին ջատ կը խոսա, ուր ուշք ու միտք դուս է, էնի ըսկի գործ չէնե։ Էն օր ըսկի չը խոսա, ուշք ու միտք վրեն է, իսկական գործ էնող է։
Մարգարեք ըսեր ին.—Էն ջառեջ-ջառեջ՝ գո՛րծն է էղի, չէ՛ թե խոսք։

24. ԳՌՈՇ ՉԱԺՍ

Մարդ մե կէրթա մըտ խիկար իմաստուն։
—Ըսե սա՛նք՝ քա՞նի տարի լե կապրիմ։
—Յըսօր-յըսօր քանի՞սն իս։
—Եթմիշ[1]։
—Բաթմի՛շ[2]։
—Յանի թե։
—Յանի թե՝ հայ-հայն դացի, վայ-վայն է մացի։ Ըստուց դեն քու ապրել-չտպրել՝ դռոշ չուժե։

25. ԴԱՐՎԵՇ ՈՒ ԹՈՓԱԼ ԹԱԳԱՎՈՐ[3]

Դարվեշ մե կէրթա մըտ թոփալ թագավոր։
—Սալամալեքըմ, յահու՛,—կըսե։
—Ալեքըմսալամ, դարվե՛շ, ի՞նչ կա։
—Շատ բան,—մեկ թոփալ, մեկ քոռ՝ դաշխար խառներ ին ֆիրար, քաշալմ՝ օր մեջտեղ դա՝ աշխար ոլտի կործանի։

26. ԴԱՐՎԵՇՆ ՈՒ ՓԱՇԵՆ

Դարվեշ խըսմին շատ սարբուստ կէղնի։ Օր մե կը մտնա փաշի դիվան, կըսե.
—Սալամալեքըմ, յահու՛։
—Ալեքըմսալամ, դարվեշ բաբա, ի՞նչ դուղիս։
—Փաշա,—կըսե դարվեշ,—էկեր իմ քըղնե ձի մե դուղիմ, կիտաս լե՝ վըր իմ բանին, չիտաս լե՝ վըր իմ բանին։
Փաշեն կըսե խղմաթքարներուն.
—Դացեք ախոռ, մեկ աչք քոռ, մեկ ֆոտ կաղ ձի մե կա, տվեք դարվեշ բաբային, տարավ լե՝ վըր իմ բանին, չը տարավ լե՝ վըր իմ բանին։

27. ԴՈՒՋ Է ՈՒ ԳՈՒՋ

Կնիկ մե ծուռ ճամպով կը քելե, դըրկեց կըսե ըդոր մարդուն.
—Իշու ֆանկըշի քնուկ, դինա՞ս, օր քու կնիկ կէրթա հըտ ուրիշի ֆոտաց։
—Տո՛,—կըսե,—էդ իմա՞լ է, օր դրսին կը տեսնա, ներսին չը տեսնա։ Դե գնա՛ պատոռի, հարի իմ աչքով չը տեսնամ՝ իմ կնկա ճամպեն դուզ է ու դուզ։

28. ԴՐԱԽՏ ՈՒ ԴԺՈԽՔ

—Պա՛սլե, օղո՞րդ է՝ մարդ օր մեռնի, էրթա էն ղիու աշխար, դընկնա յու՛ դրախտ, յա՛ դժոխք։
—Ո՞ն էկով էն դիուց, օր հաստատուց, թե դրախտ կտ ու դժոխք կա։
—Դըռ մարդ չէկի։
—Ապրի՛ս։ Լա՛ռ, թե զուղիս հաստատ ֆիմնաս՝ դրախտ լե, դժոխք լե վըր մեր էրկրին ին, մինակ թե հարուստ մըջ դրախտին է, ալքատն ի դժոխք։

29. ԴՐԿՆՑԻ ԿՆԻԿ

Մարդ մե շատ խորոտ կնիկ կունենա, լե աչք կը թալե դրկեցի կնկուն։
Կնիկ կըսե.
—Քու կնիկ ընձնե խորոտ, ընձնե շնորբով. յորի՞ն իս աչք թալի ընձի։
Մարդ կըսե.
—Օղո՛րդ է, հմա էն բան, օր քում չէ՝ հա՛մ խորոտ, հա՛մ քաղցը կէրևա։

30. ԴՐԿՆՑՆԵՐ

Պապն ըսեց ուր տղին.
—Լա՛ռ, հըտ քու տան պատահած՝ ձեռաց մը՛սի քու դրկեցին։
—Յորի՞ն,—հարցուց տղեն։
Պապն ըսեց.
—Էրկու տեսակ դրկեց կա՝ մոտ դրկեց ու հեռու դրկեց. հմա էրկուս լե մըջ ուրանց կուրահինան՝ օր ուրանց չէ, քըվի՛ է պատահի։

31. ԴԵՎ ԼՆ, ՍԱՏԱՆԱ ԼՆ

Թուրքի լամուկ կը վաղե ուր պապու մոտ. կըսե.
—Բա՛բա, բա՛բա, իմ մամ պարկտվ դև մե բերեց։
Պապ կըսե.
—Օղո՛ւլ, ինչքան օր արաբ մըզի դրկեց է, քու մամ դև լե կը բերե, սատանա լե։

32. Ս՞Ր ԿԱՌՆՆ ՉԽՍԼՔ

Աստված ե՞ր մարդու խելք կտռնե ուր դլխեն։
—Եր կնկան կավտրնա, եր ուրին կը թալե կովու մեջ, եր էն խդեր կը խմե, օր լեզուն կը լալկի։

---

[1] Յոթանասուն։
[2] Կործանված, կորած (Ս. Կ.)։
[3] Հավանորեն՝ Լենգթեմուր։
[4] Սուլթան Բայազետ, որը միականի էր (Ս. Կ)։

33. ՁԱՂԱ[1]

Ձաղա բույր մը մարդ կըսպանն, կը բըռ-վի. փաշեն հրաման կիտա, որ հանին կա-խարան։ Մարդ որ կը տանին մըտ կախարան, չվան կէցկին ի վիզ՝ կնիկ վազելով գիկա, կը կանի քիչ հեռու, կը կանչե.

—Խլո՛, տնավեր, շուտ էրե՝ տու՛ն էրթանք, ոխով ճա՞շ իմ էփի, չը պաղի՛։

34. ԷԼԸՆԹԱՐԵՆ

Ժամանակով պարնան դեն Մուրատ գետ կը կաղի, ուր ափեր քանդելով՝ գելնա, կը հասնի ղերեզմընոց, մարդու մե խոխ կառնե ուր պատոնելու մեջ, կէրթա։ Էդ խոխ կէրթա ու վիռա-վիռա կըսե.

—Ասված է՛լ ընթարեն ազատե, ասված է՛լ ընթարեն ազատե։

Մարդ մե կանուկ կէղնի գետափ, կըսե.

—Ըդրնե լե բեթար բան կա՞ աշխարք։

Խոսք դըռ բերանն էր, մեկ լե խոխ կը սկի՝ դելնա, կը սկի, գելնա, կէրթա ու շըռ՛խկ կը ղարկըվի սալին, կէղնի հազար փշուր։ Մարդ գետի տըկեն ձեն մե կը լսե.

—Ըշտե էլըեթարեն իգա՛ է։

35. ԷՐԿՈՒ ԷՇ

Մարդ մե ղրկեցի էշ կը գողնա, տանե րազար, որ ծախե, իշատեր վրա կը հասնի։

—Գողցար՝ հերք չէ, մկա լե կը ծախի՞ս։

—Հա՛,—կըսե գող,—ձեր տուն երկու էշ կա, մեկ իգա էշն է, մեկ լե դու իս. շատ որ ջեբկընցուս՝ զքըզի լե կը ծախիմ։

Ախմախ մարդ կավտըճա, որ ուրին լե պտի ծախե, կը փախնի կիգա տուն։ Կնիկ կը հարցու.

—Գտա՞ր զէշ։

—Տո քու հո՛րն օղորմի, գնա մատաղ էրե, որ փորձանքեն անչախ աղատա, քիչ էր մանցի ընձի լե ծախեր մեր իշու հետ։

36. ԹԱԳԱՎՈՐԻ ՃԱՄՊԵՆ

Թագավոր մե գընցներ փողոցով, ուր յետև ու յառեջ՝ բոլուկ մե ձիավոր։

—Պա՛պե,—ըսեց տղե մե,—թագավոր որ կա՝ ջըմնուց զոր ու ղորնդեղ է, ջորի՞ն մենակ չէրթա ուր ճամփեն։

—Էն թագավոր, լա՛ո, որ շատ-մարդ կէցկե ուր յետև ու յառջև՝ էդի շատ ղուլում էրած կէղնի, թե չէ՝ մենակ կէրթեր ուր ճամ-փեն։

37. ԹԱՆԲԻ

Վարդապետ թանբի կէնե ուր մոնթին, որ ուր հետ գրաբառ խոսա, թե չէ՝ վանքից դուս կէնե։

Օր մե՝ գել կուտե ղվանքի էշ, մոնթ դիկա կանի վարդապետի յառեջ, կըսե.

—Հա՛յր սուրբ, սարի ծաղկակոխ Սրա-պիոն ղմեր վանքի մոխրաթավալ բարբառե-լով ճաշակեր է։

—Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ։

—Սարի ծաղկակոխ Սրապիոն ղմեր վան-քի մոխրաթավալ բարբառելով ճաշակեր է։

—Տո, անիծա՛ծ, հմալ խոսա, որ հասկը-նամ։

—Անիծած դու իս. ղու թանբի չէրի՞ր, թե իմ հետ գրաբառ խոսա։ Գել կերեր է զվան-քի էշ։

—Յո՞, օղորդմա՞,—կըսե վարդապետ։

—Հմա օղորդմա՛, թե չըս ավտընա՝ ա՛ռ քըզի պոչ,—կըսե մոնթ ու զիշու պոչ կը հանե ցուցու։

38. ԹԱՌԻ՞

Քուրդ մե ծանտր կը հիվընդնա, գրկեց հայու կնիկ հիվընդի կնկան կըսե.

—Գարընցան ցորնի թազա լոշ ու ձգու մեղր բերիմ, թըղ քիրվեն ուտե։

—Թառու՞, թառու՞, թառու՞,—կըսե քրդու դռեն,—իմ մարդ նոր աղցած կորեկե հաց ու սոխի ծիլ չուտե, էն կըսե թազա լոշ ու մե՞ղր բերիմ։

39. ԺԻՐ ԿՆԻԿ

Կնիկն իրեք-չորս ամիս աչքի լուս թափե-լով անչախ մեկ թաք կը գործե, կը հագու մարդու ջոտք։

Մարդ

Ապրի՛ս, կնի՛կ, խնդացուցիր,
Մեկ ջոտքըս դուրբա հագուցիր։

[1] Ձաղա—քրդական ցեղանուն (Մ. Կ)։

ԿՆԻԿ

Մա՛րդ, սաղ մնաս հազար տարի,
Մեկն էլ գործիմ գալող տարի։

40. ԺԻՐ ՀԱՐՍ

Կնսուր ղուր շապիկ կիտա հարսին, թանրի կէնե.

—Ես կէրթամ, հարի տուն դառնամ գամ, ղիմ շապիկ կարիս, հազրիս, որ գամ հագնիմ։

Կեսուր ամիս մե յետու կը դառնա դիկա։

—Հա՛րս,—կըսե,—շապիկսի կարե՞ր իս, տուր հագնիմ։

—Պրծնալով իմ,—կըսե հարս,—մանցեր ին փեշերն ու թեր, վիղն ու կողեր։

41. ԻՄԱՍՏՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆ

Իմաստունն հարցուց մեկու մե.

—Մա՛րդ, աչքդի ո՞ն հանեց։

—Բարեկամսի հանեց։

—Էդ յասո՞վ խորունդ հանեց։

42. ԻՆԱԴ

—Ա՛ղջի, հերվա պես էլման մանցիր տու՞ն,—կը հարցնին դրկեցներ։

—Հա՛, յուզող չէղավ, իմ պապ լե ինադ էրեց, չկարգեց ղիսի,—կըսե աղջիկ։

43. ԻՐՆՔ ՐԱՆԻՑ

Գիտնակին հարցուցին.

—Օղո՞րդ է, կըսին, շատ պիտի վախենանք իրեք բանից՝ ժաժքից, օձուց, սնղղամ կնկաց։

Գիտնակն ըսեց.

—Մարդ չուրի չը փորձե՝ չը կռնա յիմնա բանի էութեն. հըմա շատերն որ կըսին՝ ըսել է օղորդ է։

44. ԻՐՆՔ ԽՈՐՈՒՐԴ

Աստվածն որ ղկնիկն ստեղծեց՝ իրեք խորուրդ տվեց տղամարդուն։

—Կնիկն ինչ ճամպա ցուցու՝ հակառակ գնա, կը յաջողիս. մե՛կ։ Օրական ընդրա մեկ կող ջարդե, քըղի խոնար կէղնի. էրկո՛ւս։ Ինչ որ պահանջե՝ «չէ» մը՛սի, չը ծերանսու. իրե՛ք։

45. ԻՐՆՔ ՀԱՐՈՒՍՏ

Իրեք մարդ կը վիճին, չը՝ն կռնա հուն յելնս, կէրթան մըտ խիկար Իմաստուն։

—Մենք,—կըսե յառջինն,—քու յոտաց հողն ինք, էկերինք քըղնե յիմանանք՝ մըղնն ո՞ր մեկն է հարուստ։

—Դո՛ւ ըսե։

—Ես օսկու ու արծըթի, մալ ու օչխըրի, արտ ու ափի տեր իմ. իմ հարստութենին չափ չկա։

—Դու ըսե սա՛նք։

—Ես ֆլան թագավորի զորապետն իմ, իմ թագավորից ես իրեք հաղ հարուստ իմ։

—Դո՛ւ լե ըսե սանք։

—Ես։—կըսե վերջինն,—ընձի ո՛չ օսկի ու արծաթ, ո՛չ մալ ու օչխար, ո՛չ արտ ու տի կա, գիտնակ մարդ իմ, իմ եղած-չեղած՝ մըչ ղլխուս է։

—Ձեր երկուսից լե հարուստ իդա գիտնակըն է, ընտրա հարստութեն ո՛չ կռնանք տեսնա, ոչ՝ կռնանք զավթի,—կըսե խիկար Իմաստուն ու թղրեն կը քաշե։

46. ԻՐՆՔ ՊԱՏՃԱՌ

Գեղացիմ կը հարցու տերտրոջ.

—Տե՛ր հայր, լսեր իմ, որ Քրիստոս կնիկ չունեցեր է։

—Օղո՛րդ է, չունեցեր է։

—Յորի՞ն։

—Ըդրան իրեք պատճառ կա՝ ուզեր է, որ գլուխ խախանդ էղնի, մե՛կ. ջոր չառնե, էրկո՛ւ. վըր ուրին սուտ լալ չէղնի, իրե՛ք։

47. ԻՐԻՑԿՆԿԱ ԼԱՑ

Խաբար կը բերին իրիցկնկան, թե տերտերն, գնտն յընցնելու վախտ, խեղդվեր է, ջուրն ղջանդակ տարի, ո՛ր դինա՝ յուր է հասուցի։

Իրիցկնիկ դիլա։ գլուխն ու չոքեր կը տվե.

—Ա՜խ,—կըսե,—մեկն, որ քսան փարա ցուց տե՞ր՝ իմ տերտեր չը՝ր խե՛ղդվի։

48. ԼՈՒՍՆԱԿԻ ՇՈՂՈՎ

Մարդ ու կնիկ պարկուկ են, լե քնած չեն. տեսան մարդ մե զգլուխ կախեր էր յերդրկեն՝

ատն քունջ ու պուճախ կիշկեր. լուսնակի շող դարկեր էր մեջ տան, յըմեն բան վերևից կերևեր։

Մարդն ըսեց.

—Կնի՛կ, տարի մե գացի գողութենի, յելա տանիք, յերդիկ բաց էր, լուսնակի շող զարկեր էր ներս, դրկվա շողն ու յիշա ցած, ինչ որ իմ սիրտ ուզեր՝ վերցի, ու յալլա՜հ թռա ի դուս։

Գող վրր յերդըկին լսեց դմարդու խոսն, սիրտ ատավ, էրեց օր փաթվեր շողին, օր յիջներ ցած, ւիրո՜թ յընկավ գհաին, յոտք կոտրավ։

—Կնի՛կ, կնի՛կ,—ըսեց մարդ,—յելի ճրագ վառե, դող է մտի տուն։

Գողն ըսեց.

—Քե՜ֆով ղճրագ վառեք, իդա յընկնալն օր ես իմ յընկի՜, յըսօ՛ր լե ձեր տունն իմ, վա՛յ լե։

49. «ԽԱՂԱՂՈՒԹՅՈ՜ՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ»

Ժամտուն՝ տերտեր կայներ էր պատարագի։ Էն գախ, օր ըսեց «Խաղաղությո՜ւն ամենեցուն, խաղտղությո՜ւն ամենեցուն», ժամվոր տղամարդ մե զգլուխ կը տաներ բերեր։ Ժամեն օր յելան՝ մարդ մոտեցավ տերտրոջ.

—Տե՛ր հայր։

—Հրամեր իս, օռշնած։

—Պատարագի վախտ օր դու կըսեր «Խաղաղութե՜ն ամենեցուն»՝ իմ ծիծղալ գիկեր։

—Յորի՞ն, կռապա՛շտ։

—Էդ վախտ ես մեջ մտքիս կըսենք, օր «խաղաղութե՜ն ամենեցուն» մե յիջներ վըր իմ կովարար կնկան՝ աշխար յըմեն կէղներ խաղաղութեն ամենեցուն։

50. ԽԱՄ ԱՋԱՌ

Քուրդ մե խամ աջառ լծի, գելնա լուծք, ինչ կէնե-չէնե՝ աջառ գլուծ չը քաշե. զլուծ գիջու վզեն, ղանկաջ կը բռնե, կը հանե դար տեղ մե, խըլղի լծքեր կը ցուցու, կըսե.

—Է՛շ-ավանակ, տե՛ս, ուրիշներու էզներ իմալ լուծք կէնին, դու լե հմա՛լ էրե։

51. ԽԱՉԱԳՈՂ ՏԻՐԱՑՈՒՆ

Խաչագող տիրացու մե մուրուք կը թորկե, ֆարաջա կը հագնի, գավաղան կառնե ձեռք, գընկէ։ա գեղըան, էրեխա կը մկրտե, թուղթ կը բանա, փարա կառնե ժողովրդից։ Տեղ մե օր էրեխա կը մկրտե՝ կըսե.

—Օռշնածնե՛ր, ես կէրթամ, օր ուրիշ տերտեր գիկա՝ էլման տվեք մկրտել։

—Յորի՞ն, տերտե՛ր, յորի՞ն,—կը հարցուն միամիտ մարդիկ։

Խաչագող կըսե.

—Օր կնքու էրեխեն՝ մեկ բախտի տեղ՝ էրկու բախտ ունենա։

52. ԽԵԼՈՔՆԵՐՈՒՑ ԽԵԼՈՔ

—Մըջ աշխըրին, խելոքներուց խելոք ո՞ն է։

—Մըջ աշխըրին խելոքներուց խելոքն աստվածն է, օր կնիկ չառեր է։

53. ԽՈՍՏՄՈՒՆՔ

Վաճառական մե պարտքնտեր գեղացուն կը խոստանա, օր տաս օսկի տա, խեղճն ուր պարտք փակե։

—Էկեր իմ, օր զտաս օսկին տաս։ Կալոցին՝ կիտամ զքու փարեն, ա՛խպեր։

—Հա՛, հա՛, գինամ, հմա յըսօր մոտսի չկա, վաղն արի։

«Վա՛ղն արի, վա՛ղն արի», խեղճի հոգին գելնա երթըլով-գալով, խոստմունք կը մնա դարտակ խոստմունք։ Գեղացու հուս օր կը կտրի՝ կըսե.

—Էն օր չը խոստանա ու կիտա՝ առուծ է, էն օր կը խոստանտ ու չի տա՝ էշ է։

54. ԽՍՄԱԹ

Ոընջբար կը բանթողվի, հինգ-վեց հոգի կը նստին ճաշի, քասե մե մածնեթան կը դնին յառջև ուրանց, հաց կը բրդին, զգդըլներ կառնին օր ուտին, ըդընցնե տարուց մեծ կըսե.

—Աստվա՛ծ, դու խսմաթ էնիս, օր ուտինք։

Պզտիկն կըսե.

—Հո՛խպեր, խսմա՜թս ո՛րն է, հաց է, հանդե դըռւկ է յառջև մի, ու կուտինք։

Խոսք դըռ բերանն էր՝ մեկի մե ձեռք նագեհան կը կպի քասին, քասեն կը շրջի, մածնեթան կը թափի, յըմեն կը թողին քաշվին մեկ դեն։

Մեծ ռընջբար կըսե.

—Ի՞մալ է, խսմաթ էղա՞վ. բան մե օր աստված խսմաթ չէնե, մարդ չը կռնա ուտե։

55. ԽՐԱՏ

Հեր մի տղին կը խրատեր.

—Էն տղեն, օր աշխատել կը սիրե, կը նմանի էրթըցող զուվալ ջուր։ յըմենք դուզին էդ ջրեն խմին։ Էն տղեն, օր աշխատել չը սիրե, կը նմանի ջրհորի հոտուկ ժանգաջուր, յըմենք ֆերես կը դառնուն ընդունե։

56. ԽՐԱՏ

Աղվըսու ձըգեր ուրանց մամուն ըսին.

—Մա՛մո, մըղի ֆել ու ֆանդ սորվըցու, օր դել ու գաղանի ձեռք չընկնանք։

Մամն ըսեց.

—Լո՛ռ, ֆել ու ֆանդ շա՞տ կա, լե յըմնուդ աղեկն էն է, օր ձեր ծկուց ըսկի դուս չելնաք։

57. ԿՆԻԿ ՈՒ ԹՂԹՐԱՑ

Կնիկ մե կկրթա մըտ թղթբաց.

—Մեռնիմ քու յոտներուն, հմալ թուղթ մե էրե, օր իմ էրիկ՝ դրկեցի կնկաց ձեռ քաշե։

Թղթբաց թուղթ կէնե, կիտա կնկան ու գլուխն օրորելով՝ կըսե.

—Էն չուֆթա զարկող որձ էշն, օր ուրիշի ուրոտ կսրծա՝ էլման ընգոր տերն պտի զվզկապն էցկե վիզ, քաշե հանե դուս, թե չէ՝ թղթրաց չէ, սատանե՛ն լե չկոնտ հանե գուս։

58. ԿՆԿԱ ԴԱՂՏՆԻՆ

Մարդ մե ուր կնկան ըսեց.

—Կնի՛կ, քըղի գաղտնի մե ոտի ըռիմ, մարդու չըսի՞ս։

—Հալկիմ՝ թե ըսիմ։

—Քավոր Մլքոն գիշերսի դեկնա տանիք։ կը մտնա սանահեր խուկե կնկա ծոց։ Մարդ քնուց կը թռնա, կը բռնե ըդոր ֆոտ ու գլուխ, ու ա՛ռ հա՝ ֆոտաց տեղ[1]։

—Քա վո՞ւյ, ֆետե՞։

—Էլ ի՞նչ ֆետե, մարդ օր շնութեն էնե, ֆետե-ֆառեչ՝ ֆոտաց տեղն է։

Ձըր ֆընցի կառճ ժամանակ մե, գեղ-գեղովի ֆիմցան։

[1] Գյուղական անծածկ արտաքնոց (Ծ. Կ)։

59. ԿՆԿԱ ՈՒԽՏ

Կնիկ մե ղուր իրիկ կը հանե գըզի ծառի վրեն, օր գուղ բաղե. իմալ կկղնի՝ էրկա յոտք կը փոտա, ծառեն զընկնա, կը մեռնի։ Կնիկ կը նստի մեռած իրկա կուշա, գիլա, կողբա, զգլուխ կը ծեծե, կըսե.

Թոբա էնիմ, էլ զուգ չուտիմ,
Քարով կոտրիմ, լոշով ուտիմ։

60. ԿՆԿԱ ՊԱՏԱՍԽԱՆ

Մարդ կկրթա խարիբութեն, տուն կը մնան կնիկն ու էրկու էրեխա։ Քանի մե տարի յետո կը դառնա գիկա, կը տեսնա օր չորս էրեխա կա։

—Կնի՛կ,—կըսե մարդ,—ես օր դացի՝ մըղի էրկու էրեխա կէր, միա չորս հատ է, էդ ո՞ր տեղից է։

—Քա՛ մարդ,—կըսե կնիկ,—ղու օր դացիր՝ էրկու հատ ունենք, չէ՞։

—Հա՛, էրկու հատ ունենք։

—Մեկ լե փորս էր։

—Խաբուլ իմ, մեկ լե փորդ էր. ասլա էն թավ պզտի՞կ։

Կնիկն ուրին չը կորցու։ կըսե.

—Է՞, ինչ էրեր է՝ պզտի՞կն է էրի, էն լե մեկելտանց հետ թըղ էրթա ուրին ապրի։

61. ԿՌՎԻ ՊԱՏՃԱՌ

Գրգոն ու Սրգոն կը խոսեն. Գրգոն կը վերցու Սրգոյին կըսե.

—Յանի դու՞ լե։

Սրգոն կը սրտնեղի։

—Ինչ ըսի՞ր, ընձի ըսիր «յանի դու՞ լե». մարդ հարի յըսօր ընձի հմալ խոսք չըսեր է, ես քու...

Կըսե, կը քաշե դանակ ու ա՛ռ հա Գրգո փոր, կը խառնե. հարի օգնութեն, հարի գես, հարի դեն, մարդ կը մեռնի։ Գրգո աղգուտակ կը թափի վըր Սրգոն, ծեծով կը մեռցու. խուլասա՝ էրկու ազգուակտիք կը խառվին յիրար, էրկու դիեն ահագին մարդ կըսպանվի։

Մեծորեք ըսեր ին. «Թեթև խոսք՝ անխելքին ծանտը գիկա, սլատճառ կը դառնա կռվի ու սպանության։ հարի խելքի գիկտն՝ բանբանից ֆընցուկ կէզնի»։

62. ԿՌՎԻ ՊԱՏՃԱՌ

—Տեր հա՛յր, կռնա՞ս ընձի բացատրիս, թե մարդ ու ենեն յորի՞ն կը կռվին։

Մեծորեք ըսած ին.—Հանտարդ քելող՝ յերկեն կէրթա։

71. ՃԱՆ ՄԵ

—Տե՛րտեր,—կըսե մարդ մե,—էրե պատարագ մե, քըղի տամ ճան մե։

Տերտեր կըսե.

—Կէնիմ հմալ պատարագ մե, օր չաժե ճան մե։

72. ՃՆՃՂՈՒ ՋՈՒՐԲԵՆ

Զմեռ կեղնի, ցուրտ կը ղոռե, ճնճղու յոտներ կը մրսին, յոտ մե կը վերցու մեկ կը դնե.

—Հմալ չէղնի,—կըսե,—գարուն օր յիգա, ջուխտ մե ջուրբա պտի գործիմ, հագնիմ։

Գարուն գիկա, օրեր կը տաքնան, ճնճուղ կը թավուկա ու կըսե.

—Ես՝ ի դո՞ր, ջուրբեն ի դո՞ր։

73. ՄԱՋՆ ԿԱՐՄՈՒՆՋ

Պառավ մե յըմնօր դելնա կանի դեմ աղոթըրան, սրտին կը տփե։ կըսե.

—Աստվա՛ծ, քու բախան իմ յընկի, ղիս աղատիս մաղե կարմընջեն, յամա՛ն։

Դրկեց կը տեսնա, օր պառավ մաղե կարմընջեն ձեռք չը քաշե, կըսե.

—Պառա՛վ, ի՞նչ գործ ունիս մաղե կարմընջի հետ, հմա գետի ափ ըռնե ու ղու՛ղ դնա։

74. ՄԱԹՈՍ ԱՂՆՆ

Մաթոս աղեն 999 տարի կապրի, աչքն աշխարքեն չը կարե։ գուդե էլ ապրի, ասածուց խնդիրք կէնե, օր ուր տարիներն յեվելցու։

Հրիշտակն գիկա մըտ Մաթոս աղեն, կըսե.

—Մաթո՛ս աղա, ղձեւքդի զարկ էղան պառեկին, ինչ խդար մաղ յընկնա տակ, էն խդար տարի լե կապրիս։

Մաթոս աղեն ղձեռք չը զարկե, զփոր կը թալե վըր էղան, հմա՛ հրիշտակ կը զարկե ղլխուն, զհոգին կառնե։

75. ՄԱՀՈՒ ՎԱԽ

Պապ մե հարցուց ուր տղին.

—Ես օր մեռնիմ։ ի՞նչ կէնիս։

—Գիլամ ու կծկծամ։

—Յորի՞ն։

—Գիլամ ու կծկծամ է՛ն յապով, որ մահու վախ կա մըջ մարդուն, է՛ն յապով, օր ես լո պտի մեռնիմ քու պես։

Մեծորեք ըսեր ին.—Մեռելի վրեն լացողն՝ յառեջ-յառեջ՝ ոգ վրեն գիլա։

76. ՄԱՐԴՆ ՈՒ ԴՆՏ

Գարնան՝ մարդ մե լողալով ուրին թալեց էն ափ։ Դառձավ, ըսեց.

—Մարդագիլու պես կատղի, ափից յելեր իս, ի՞նչ կա։

Գետն պատասխանեց.

—Մա՛րդ, յորի՞ ընձի կանպատվիս։ Ես օր իմ ափերուց դելնամ՝ մարգոց պետք իմ, հմա դու օր կատղիս, ափից յելնաս՝ ո՛չ քըղի իս պետք, ո՛չ մարդոց։

77. ՄԵԾ ՆՋՆՆՆ Է

Գեղացին մեծ եղն ու խամ աջառ լծեր հրտ յիրարու վար կէներ։ Աջառ կը ծռմռեր, չը թողեր վար յառեջ էրթա։ Աջառն օր ղլուծ կը ծռմռե, մանջկալ ղմեծ եղ կը ծեծե, տեսնողներ կըսին.

—Ա՛խպեր, ծռմռողն աջառն է, ղու ղմեծ եղն յորի՞ն կը ծեծիս։

Վար էնողն կըսե.

—Հը՞, ղուք չըք դի՛նա, մեծ եղն է, օր աչքով կէնե աջառն, աջառ լե կը ծռե ղլուծ։

78. ՄԵԿ ՍԱՆՏՐԻ ԿՏԱՎ

Աղռավն օր մե ըսեց անձրղուն.

—Շատախո՛ս։ պիմ դլուխ տարար։

Անձեղն ըսեց.

—Գլխակե՛ր, ապա քու կոկոռ՞ց, օր ձեն կը թալիս՝ իմ ջան կը դողա։

Ճնճուղմ՝ էն դիուց ձեն տվեց.

—Կտրե՛ք ղձեր ձեն, էրկուսդ լե մեկ սանտրի կտավ իք։

79. ՄԵՂՐԻ ԴԻՆ

Մշեցիմ կէրթա քաղաք, կը մտնա դուքան մե. տաշտերու մեջ Մոտկանա սաթի պես մեղր օր կը տեսնա, ըներեն ջուր կը վազե. փարա չունի, օր մեղր դնե։ կը նստի դասի

տակ, հաց կը հանե, բրդուճ կը շինե, ու յանի մեղր կուտե, կը դնե բերան։ Մեկ, էրկու, իրեք՝ զհաց կը խլըսցու։

Դուքնչին կէրթա մըտ մշեցին, փարա կուղե։

—Ի՞նչ փարա։— կը հարցու մշեցին։

—Մեղր կերար, մեղրի փարեն։

Մշեցին ղձեռ կը տանե ծոց, կը հանե, մատներն ֆիրար կը քսե, յանի փարա կը համբե, կըսե.

—Ա՛ռ, մեկ, էրկու, իրեք, դե՛ գնա։

Դուքնչին կը պաղբերնի մնա։ Կշտի ղուքնչիք, օր թամաշա կէնեն, կըսին.

—Մշեցին օդորդ կէնե, էդ հմալ մեկը ուտելուն լե հմլա փարա կիտան։

80. ՄԵՌՆԻ ԿԻՆ, ԱՌՆԵ ՔԵՆԻՆ

Հարուստի կնիկ կը մեռնի, աչք գընկնա ուը քենին. լե վարդապետ հրաման չիտա։ Գիշերով կէրթա մըտ սրրազան։

—Հրաման տուր առնիմ զիմ բենին։

—Չէ՛ղնի։

—Ին ու ին՝

Առնիմ զիմ քենին։

—Չէ՛ղնի։

—Ին ու ին,

Տաս ֆլորին,

Առնիմ զիմ քենին։

—Չէ՛ղնի, չէ՛ղնի։

—Ին ու ին,

Տաս ֆլորին,

Սիվտակ ջորին,

Առնիմ զիմ քենին։

—Չէ՛ղնի, չէ՛ղնի, չէ՛ղնի։

—Ին ու ին։

Տաս ֆլորին,

Սիվտակ ջորին,

Վրեն էգին,

Առնիմ զիմ քենին։

Վարդապետ կը թուլնա, կըսե.

—Գրագի՛ր, գրե զհրամանագիր, թե՝

Ին ու ին,

Տաս ֆլորին,

Սիվտակ ջորին,

Վրեն էգին,

Մեռնի կին, առնե քենին։

81. ՄԵՌՆԻՄ ԵՍ ՔՈՒ ՁՈՐԱՑ

Կորեկ հաց. օր բրդեն մըջ թանին, կը սկի տակ։

Հայ մե կորեկ կը բրդե մըջ թանին, կուտե, քուրդ մե կը մտնա ներս։

—Ֆլա՛,—կըսե,—կտոր մե հաց տու, անոթի իմ։

—Քիրվա։—կրսե հայն,—կը տեսնա՞ս, հաց չունինք, ես լե տուանց հացի լղպոր թան կուտիմ։

Քուրդ կավտրնա, կէրթա։

Հայն կըսե.—

Կորե՛կ, մեռնիմ ես քո զորաց,
Պահիր յերեսդ ի յանօրաց։

82. ՄԺԻԿՆ ՈՒ ԴԵՎԵՆ

Աշնան ցրտեր կը ղորին. մժիկ կը փախնի մտնա դեվի յանկաջ, կը սթըրվորի։

Գարուն գիկա, օրեր կը տաքնան, մժիկ ղելնա կանի դեվի յառջև, կըսե.

—Է՞, մանցի բարի, ա՛ղա, ես կէրթամ, ասավածուշեն քու տուն էղնի։

—Դու ո՞ն իս,—կը հարցու դեվեն,—զբըզի չրմ ճանչնա։

—Ի՞մալ թե ո՛ն իս։ Իդա իրեք-չորս ամիս է մըջ քու յանկրջին կապրիմ, հլա կըսիս՝ զբըզի չրմ ճա՞նչնա։

—Տո՛, կորի գնա, նա՛ գալդ իմ յիմցի, նա՛ գնալդի։

83. ՄԻԱՄԻՏ ԿՆԻԿ

Կնիկ մե կըսեր.

—Քանիմ փարա քոմեր ենք վըր յիրարու, դրեր ենք մըջ խութուն, օր տղիս հարսնիք էնենք, աղջիկ մե բերենք. փեսեն էկավ տուն, լուսուն յելանք տեսանք՝ փարեն մըջ խութուն չէր։ Սանամե՛ր, ըսիս փեսեն փարա կը դողնա՞։

84. ՄԿՐԱՏ

Մարդ ու կնիկ քաղուկ արտի մոտով գընցնեն, մարդ կը վերու կըսե.

—Կանչնա՛ քու քաղողի ձեռք, էդ իմալ քալ է էրի, կըսիս մկըրտով է քաղած։

—Քա՛, ապա՞, մկըրտով է քաղած, մա՛ղդ, օր հմլա հափսար ին ծղոներ։

—Կնի՛կ զավակ, արտն ըսկի մկըրտով կը քաղվի՞. արտ մարդու դլուխ է, օր մկըրտով

քաղվի։ Արտ յա գերընդով կը քաղին, յա մանգրղով։

—Չէ՛, մկրտո՛վ է։

«Մկրտով չէ՛, մկրտով է՛, մկրտո՛վ չէ. մկրտո՛վ է», մարդ կը տեսնա, օր վրը կնկա լեզվին չը կոնա, կը վերցու զկնիկն ու ա՛ռ հա մըջ դետին։ Կնիկ կը լղլղցու՝ «մկրտո՛վ է». կը տեսնա օր կը խեղդվի, զթև կը հանե դուս, ղէրկու մատներ մկրտի պես բաց ու խուփ կէնե՝ թե ի՛լահի մկրտով է քաղած։

85. ՄՈՌՑԵՐ Է ՎԱՆՔ

Մուրոն զօր-զիշեր կը մտածեր, օր դառնա տերտեր։ Մարդ զհար կը գտնա՝ կառնե օչխար մե, կէրթա մըտ վանքի վանահայր։

—Աջիդ մեռնիմ, սրբազան։

—Աղե՛կ, աղե՛կ, օրշնածե։ Լսեր իմ, օր կապելով կը կարդաս, հմա վնաս չունի, բու սիրտ չը կոարիմ։

Քառասուն օրվա մեջ նորընծի մուրուք դեր-կընա, կը հագնի փիլոն, կէրթա ժամ՝ օր կարգ կատարե։ Խոպող ձենով թարս ու շի-տակ «Հայր մեր» մե կըսե, քանիմ աղոթա-խոսք կը խառնե յիրար, կը լալկի մնա։ Ժամվորներ կը պարմանան։ Ժամվոր մե կըսե.

—Ախպե՛ր, աչքսի բացեր-չըբացեր իմ՝ ժամ ու պատարագ իմ լսի. ինչ օր նորընծեն կը կմկմա՝ ըսկի չը լսեր իմ, յորի՞ն։

—Քու տուն չավիրի,—կըսե ուրիշ մե,—ուր դիցած-չըդիցած՝ մոռցեր է վանք։ Մարդ ցածութեն էնե, էրթա մըտ վարդապետ, ըսե. «Աստված կընդունե, օր քանիմ օչխար լի անուշ էնիս։ մինակ թե հանիս ըդրա փիլոն ու կնդիս ըդրա մուրուք»։

86. ՄՈՒԿՆ ՈՒ ԱՆՁԵՂ

Սլիկ մուկն ու Քոռ անձեղ կընկերանան՝ օր մեկտեղ աշխատին, մեկտեղ ուտին։ Զվաստակածն օր կը բերին՝ հարմար վախտ՝ Մուկն ուրին կը գողնա, Անձեղն՝ ուրին, բան կը բացվի, կը կուվին. Մուկ կը փախնի մտնա ծակ, Անձեղ կը թռնա կէրթա դաշտ։

Ճնճուղ մե ճլվլալեն կըսեր.

—Մուկն յու՛ր, անձեղն յու՛ր։

87. ՅՆԼՎՐԻԿ ՈՒ ԳԼԽՎՐԻԿ

Հեռու աղհանքից շալկելով ու տարտաժա-բանքով մարդու բերած աղն ուր կնիկ յուզո-ղին չէ չըսե։ բոլ-բոլ՝ կիտա, աղ շուտ մե շուտ կը խլըսի։

—Չէ՛,—կըսե մարդ,—հարի իմ կնիկ աղ շալկով չը բերե, չարչարանք չը քաշե, զաղի խադր չը գինա։

Աղն օր կը խլըսի, կառնե զկնիկ, կէրթա աղհանք, տոպրակ մե աղ կը դնե կնկա։ շալակ, տոպրակ մը լե ինք կը շալկե, գընկ-նան ճամպա։ Ճամպեն յել ու զլխըվեր շատ կունենա, հրտ քելելուն՝ կնիկ քամի կը թո-ղե։ Խուլասա՝ գիկան հասնին տուն։

Սովրուկ գրկեցներ էլման գիկան աղ գու-ղին, կնիկ կըսե.

—Էն յելվրիկն ու գլխվրիկ, էն մանր ու բեդ քամին լե գինան՝ հատ աղ մարդու չը՛մ իտա։

88. ՅՐՄՆՈՒՑ ԱՂԵԿ

Տղեն պապուն կը հարցու.

—Մլքերու մեջ յրմնուց տղեկ ո՞ր մեկն է։

—Էն օր մսաիկ է,—կըսե պապ։

—Քընց էնի աղե՞կ։

—Էն՝ օր յեվելի մսաիկ է։

89. ՆՄԱՆ ՉՆՄԱՆՆ ՍԻՐԵ

Ամպն յելավ, դաշտի վրով գնաց։ գնաց, կանավ վրը ծովին։

Դաշտն ըսեց.

—Ա՛մպ, գանձրև թափիր ի ծով, ծովին ջուր չկե՞ր։

Ամպ ձեն չը հանեց։

Էգ յատպով ըսած ին.

—Նման զնմանն սիրե։

90. ՇՆՈՐՔ

Իշուն ըսին.

—Կոնա՞ս շնորք մե ցուցուս։

Էշն ուր գլուխ կը անկե, ինչ խդեր ձեն կա ի փոր, կը զռա։

—Ըշտե իդա լե իմ շնո՛րք,—կըսե։

91. ՇՈՒՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Օր մե շունն ըսեց կատվին.

—Ա՛րի բարիշ ապրինք։

Կատուն ըսեց.

—Չէ՛ղնի։

—Ցորի՞ն,—ըսեց շունը։

Կատուն ըսեց.

—Դու՝ զատն ես, ես՝ ի ներս։ մեր դուս ու ներսն հետ յիրար չէ՛ըԹան։

92. ՇՈՒՔ ՈՒ ՍԱՐԴ

Օր մը շուքն ըսեց մարդուն.

—Ջա՜նըմ, յուր էրԹաս՝ ընձի քու հետ կը քաշիս տանիս, ե՞ր կը պրծնամ քըզնե։

—Է՜,—ըսեց մարդ,—փառք տուր աստծուն, որ կաս, ես որ չէղնիմ՝ դու բնի՛կ չէղնիս։

93. ՈՆ ՅԱՆԿԸՋՈՎ ՋԸ ԼՍԵ

Տղեմ հա՛ կը բըԹըռԹեր, մարդոց կոշտ խոսքեր կըսեր։ վիր հասներ՝ զարկան դմշու պես կը կռաշեր։ Տնեցիք խըրատ կիտան, հե՛չ, յա ըդորն էս ըսի, յա քամուն։

Օրերուց օր մե՝ ռաստ գիկա աղի մե, դեշ խոսք կը Թալե ըդոր. տղա, դու տղա, հմա՛լ ծեծ մը կիտա, որ օչխըրի փուԹ կը քաշին վրենի։

—Տեսա՞ր, որ կըսենք՝ չըր լսեր էդ օչխըրի փոսԹ լե վկա, ո՛ն յանկըջով չը լսե, պառնկո՛վ կը լսե։

94. Ո՛Չ ՄՏԻ, Ո՛Չ ՀԱՑ ԿԵՐ

Մարդ ու կնիկ նստած կը խոսեն, ըդոց բարեկամ խոնախ գիկա։ Մարդն, իմալ պեսք է, ծիծաղերես կընդունե, կը խոսա, գքեֆն ու հալ կը հարցու. կնիկն անջախ Թեմեն կը բարեւ, կէըԹա դուսը ճաշի վախտ՝ կնիկն ուր բերան չը բանա, հեղ մե չը հարցու ըդոր հալ ու քեֆ, խոնախ մեկ-էրկու բրդուճ կուտե, կը քաշվի։

—Ցա՜, խնա՛մ խուկե, յորի՞ն քաշվար։

—Շենն ի սեղան, վըսօր իշաես փակ է։

էրԹըլու վախտ խոնախն ղատնտիրոջ կը քաշե մեկ դեն, կըսե.

—Բարեկամ,—կըսե,—ընձնե քըզի օսյաԹ. էն տան կնիկն որ քիԹ ու մռԹով խոնախ կընդունե՝ էդ տուն ո՛չ մտի, ո՛չ հաց կերի։

95. Ո՞Ր ՄԵԿ ՅԸՆԿԵՐՆ Է ԱՂԵԿ

Իմաստունին հարցուցին.

—Ո՞ր մեկ յընկերն է աղեկ։

—էն, որ աղ ու հաց չը մո՛ռնա, էն, որ մըջ նեղուԹենին կը հասնի. էն, որ ղանձ կը մատղե յընկերոջ համար։

Ժողովուրդն ըսեր է.

—Աղեկ յընկերն ախպորից աղեկ է։

96. ՈՒՐԲԱԹ, ՔԸՆՑ ՇԱԲԱԹ

Հայ մը գիմադիր կը կանի քուրդ բեկին. բեկ կը կատղի, իրեք քար կառնե ձեռք, կը Թալե, կըսե.

—Իմ կնիկ հմըա Թորկուկ էղնի, Թե դալող ուրբաԹ օր սաղ մնաս վըր աշխըրին։

Բեկ վռազ-վազ կէրԹա տուն, բաքըա կէնե որ ուրբաԹ օր գա, ղհայուն սպանե, կոըցու. հայու բախտեն՝ ուրիշ բեկիմ հետ կռվի կը բռնվի ու հմա ուրբաԹ օրվա մեջ կըսպանվի։

էդ բան կէղնի մասալ, ըրնկնա մըջ ժողովուրդ։

—ՈւրբաԹ, քընց շաբաԹ շո՛ւտ էկավ։

97. ՈՒՐԻ՛Շ ԴՈՒՌ ՄԵ ԲԱՑ

Աղքատ դեղացին վար կէնե, ինք մանչ կը բռնե, կնիկ լե հորիք կը քշե։ Ակոս մը կը վարե ու մեկ կըսե.

—Աստվա՛ծ, դու դուռ մը բանաս։

Նադեհան քամին կը զարկե, ղկնկա միզար կը շըջե, կնկա դոգ ու մոդ կը բացե.

—Տո՛, աստվա՛ծ,—կըսե դեղացին,—էդ դուռ ես յըմնօր լե կը բանամ, դու ուրի՛շ դուռ մէ բաց։

98. ՈՒ՛Ր ՔԵՖՆ Է

Պառավ պունդ մե կրակ ձեռքն առած՝ կէրԹեր դըխ ծուխ։

—Պառա՛վ,—ըսին,—էդ յու՞ր հմըա վազով կէըԹաս։

—Կէրթամ ղծով կպում։

—Հա՜յ-հա՜յ, ըսկի ծով կրակով կը վառվի՞։

—Ես իմ վատուԹեն կէնիմ,—կըսե,—վառավ լե ո՛ւր քեֆն է, չը վառավ լե ո՛ւր քեֆն է։

99. ՋԱՐՈՒԽՆ ՈՒ ՍՈՂ

Ջարուխն սոլին ըսեց.

—Ջա՛նըմ, ես լե յոտնաման իմ, դու լե,

ղիս լև կաշուց կը շինին, զքըզի լե. ըրը յորի՞ն մարդիկ քըզի պատիվ կիտան· տեղ մ՝ օր կէրթանք ես ու դու, զքըզի վերև կը դնին, ընձի ցած. հլա շատ հեղ վրես կը կոխռնին, կէրթան-դիկան, պատճառն ի՞նչ է։

—Ես ծեծ իմ կերի, էնոքի,—կըսե սոլ։

100. ՁԸ ԽՐԱՏՈՂ ՀԱՐՍԻՆ՝ ԽՐԱՏ

Պառավ մե ուր հարսին կըսեր.

—Էն մամ, օր ղտղեն չը խրատե՝ կը մնի հոտած ջրհոր, էն մամ, օր կը խրատե՝ կը մընի յադրըրի պաղ ջուր։

101. ՁԸ ՏՎԵՐ Է ԱՍՏՎԱԾ

—Մարդ քա՞նի տարի գուղե, օր աչքն ուրին կշտացած՝ հեռենա էն դիու աշխար։

—Ըդոր թիվ ու համրանք չը տվեր է ասուված։

102. ՁԿԱ ԳԻՇԵՐ՝ ՕՐ ՁԸ ԼՈՒՍՆԱ

Գիշերկեսին թոռ ձեն կիտա.

—Պապե՛, պապե՛, գիշերն յորի՞ն յերկընցավ։

—Ձերկընցեր է, քնի՛։

—Լուսնակ չկա, ասաղ չկա։ Ջորս դեն՝ մութ։

—Քնի՛, ընի՛։ Ձկա գիշեր՝ օր չը լուսնա։

103. ՊԱՌԱՎՆ ՈՒ ՏԵՐՏԵՐ

Պառավ ալուր կը մաղե, պիղ մե կէրթա սրնե, կէրթա մըտ տերտեր։

—Տե՛ր աեր,—կըսե պառավ,—ծանտր մեղք իմ գործի։

—Ի՞նչ մեղք, պառավ։

—Իմ յերես քու առջև սև է, տերտե՛ր,—կըսե պառավ,—ալուր կը մաղենք՝ պիղ մե գնաց ընձնե, թողութեն էրե։

—Օռշնա՛ծ,—կըսե տերտեր,—դարդ մէնի, ո՞ր դինա քամին ղքու պիղ ո՛ր սար ու ձորն է տարի կորցուցի։

104. ՊԱՌՎՈՒ ԱՐՏԸՍՈՒՆՔ

Վարդապետն յեշխով բարող կիտեր, կը տեսնա պառավ մե՝ քարե կարկտի պես արտըսունք կը թափե։

—Պա՛ռավ,—կըսե վարդապետ,—աստված ապաշխարանք համարե, առատ արտըսունք կը թափիս, մեղքերուդ թողութեն էղնի։

Պառավ կըսե.

—Ա՜խ, մեռնիմ քրդի, հայր սուրբ։ յընգախ օր դու քարոզ կիտեր, քու մուրուք կը տուտզեր, իմ փիցուկ էծն յընկավ միտքսի. էն լե օր կը մկմկեր, ուր մուրուք կը տուտզեր քու մուրքի պես, էն յաւգով շատ լացի։

105. ՊԱՏԱՍԽԱՆ

Մեկ խելքե պակաս։ ուր տղի հետ կը մտնա գեղ մե։

—Խոպուկնե՛ր,—կը բոռա,—չը տե՞սնաք, օր ես էկեր իմ։

Գեղացիմ կը պատասխանե.

—Կը տեսնանք ու աղե՛կ կը տեսնանը՝ Լշ մե հրա բուոկուն մտեր է գեզ։

106. ՊԱՐԾԵՆԿՈՏ

Պարծենկոտի մեկ հա՛ կըսեր.

—Ես կունամ զգել ռունիմ, խեղգիմ, թալիմ մեկ դեն։

Էդ դախ գրկեցի շուն կը հաշա։

—Յամա՜ն, գելն էկավ,—կըսե պարծենկոտն ու կը փախնի մտնա փեթկի յետև։

—Ը՜ը՜, քու պատանք կարիմ,—ըսեց կնիկըն,—էդի սանհեր Սրգո շունն էր հաշաց, յիմցուց՝ օր քու պես շուն-յընկեր մե ճարեր է։

107. ՊԱՐԾԵՆԿՈՏ ԼԱՊՍՏՐԱԿ

Լապստրակ մըջ դաշտին կը թավոկեր ու կըսեր.

—Ջոլի ջուն ու ջանավարներից մեկ լե ե՛ս իմ։

Նագեհան նեճիրվան էն դիեն կէրևա, լապստրկու չարեն կը կտրի, զինք կը թալե գիլու ծակ. դրա ծկու կես չըր յիջի՝ գիլու օռնոց կը լսե։

Լապստրակ կը մնա մըջ էրկու կրակին. վերև՝ տաժի ու թուլա, ներքև՝ դել ու գազան։ Խուլասա, գիջնա ցած, գել յոնի չէղնի, մինակ ձըդերն ին։

—Լակոտնե՛ր. մինա՞կ իք,—քիթ տնկած կը հարցու։

—Մինակ ինք, մեր մամ յոգա չէ։

—Ցո՞ւր է գացի։

—Գացեր է մըղի ուտելու բան բերե։

—Ափսո՜ս,—կըսե լապստրակ,—դըրտակ պտի յէա դառնամ։ Ջեր մամ փախցնելու յապով Լկա, Լն լե իմ քոռ բախտեն՝ յոգա չէ։

108. ՊԼԵՃ[1] ՈՒ ԴԴՈՒՄ

Պլեճ յեվկըռըգ անունով վարդապետն օր մե խոնախ կէրթա. ճաշի վախտ տանտեր կը բռսա կնկան.

—Պիվալի Թո՜ւ. Թթվի կարսեն պլեճ մե րի՜, հըտ ճաշին ուտի՜նք։

Վարդապետ կը պատասխանե.

—Դդումն օղս՜րդ կըսե՝ առանց Թթվի ցած չէրԹա՜։

109. ՋԱ՛ՅՆԱՄ ԹԻ ԿԸ ՎԱՌԻՆ

Ալեն նստեր էր բախչեն, կուտեր, կը խմեր, կրակ ընկնա տուն. ծառան հավարով գիկա կըսե.

—Աղա՛, տներ կը վառին։

Ալեն կը պատասխանե.

—Ջէ՞ օր մկներն էլ հետ կը վառին, ջա՛յնամ, Թե կը վառին։

110. ՍԱՐԽՈՇ

Մարդ մե հմալ էր խմի, որ վըր յոտներուն չըր կոնի կանի։ կը գլորտկեր, ըընկներ ու գելներ. ուրին հմալ կերևեր, օր ղետին գել-նա վերե, էրկինք գիջնա ցած, արև լե կը Թարլախ ուր չորս բոլոր։ Մարդ մե սատ գիկա, սարխոշ կը հարցու.

—Ախպե՛ր,—կըսե,—իղա արև յորի՞ն հը-մալ Թարլտելով յառեջ կէրԹա։

Մարդ կը պատասխանե.

—Ցըսօր շա՜տ է խմի։ Լնոքի Թարլտելով յառեջ կէրԹա։

111. ՍԻՍՌՈՎ ՀԱՇԻՎ

Հին վախտ օրացույց չկէր, ռեսներ, տեր-տըրներ սիսռով հաշիվ կը պահեն։

Տերտեր մե՝ ջոջ պասի էրկուշարԹին 49 սիսեռ դըլնա ուր ջեբ, օր օրական սիսեռ մե ջեբեն հանե Թալե, հարի ղատիկ գա։ Իրիցկին օր մե ղտերտըրոջ անԹարին՝ կը լվա, կը տեսնա՝ ջեբ սիսեռ կա։

—Վո՜ւյ քոռանամ ու կուրնամ ես, տերտեր սիսռից հաղ կէնե, ես խաբար չունիմ։

Կըսե։ կը բերե ճանկ մե սիսեռ դըլնա ի տերտրոջ ջեբ։ Զատկի օրեր կը մոտենան, լե ջեբի սիսըռներուն վեռջ չկա։

Ժողովուրդ կը հարցու.

—Տե՛րտեր, ղատիկ ե՞բ գիկա։

Տերտեր կըսե.

—Օոշնածնե՛ր, օր իմ ջեբի սիսըռներուն մնա՜, էս տարի ղատկի ջերես չընք տեսնա։

112. ՍՈՒԼԹԱՆՆ ԱԽՄԱԽ

Սուլթան դալալ կիտա կանչել.

—Մըջ իմ էրկրին ո՛ն օր ուրին ախմա՜խ կը հաշվե, Թըղ գա կանի իմ յառջև՜, ընդրան օսկի՜ կիտամ։

Է՜, օսկի չէ։ ի՛նչ դուղե էղնի, ո՞ն ուըին ախմախ կը հաշվե. մինակ մեկ մարդ սիրտ կլնե, կէրԹա մըտ սուլԹան։

—Հը՞,—կը հարցու սուլԹան,—մըջ իմ էըկրին մեկ ախմախ կա, էն լե դու՞ իս։

—Ջէ՛,—կըսե,—էրկո՛ւ ախմախ կա։

—Էն մեկ ո՞ն է։

—Էն մեկ լե դո՛ւ իս։

—Ի՞մալ։

—Յառջին ախմախ դու իս, օր ախմախ հրաման իս հանի, մեկել ախմախ լե ե՛ս իմ, օր ղըու խոսք ռանի տեղ իմ դրի, յելեր էկեր իմ։

Ժողովուրդ կըսե.—Թեթև խոսքն ծանդր կը նստի վըր մարդուն։

113. ՍՏԱՄԲՈԼ ՈՒ ԴԵՂ

Մարդ մե կէրԹա Ստամբոլ, քանիմ տարի կը մնա, կը դառնա դեղ, դեղացիք կը հար-ցուն.

—Քաղա՞քն է աղեկ, Թե՞ դեղ։

—Գեղն է աղեկ։

—Հա՜յ-հա՜յ։

—Ստամբոլն՝ Ստամբոլ։ հմա յըմնուց ա-ղեկ էլման մարդու տունն է։

---

[1] Թթու դրած փոքրիկ ձմերուկ (Ս. Կ.)։

[1] Գրչի սխալմունք է, պետք է լինի ֆարա-ջեն (Ս. Կ.)։

114. ՎԱՆՔԻ ՔՈՌ

Վանքի միաբաններուց քոռ մը դիշեր-ցերեկ կը ճճգոհի, գանգատ կէնե, կըսե.

—Կուտին, կը խմին, կը հագնին, ընձի փայ-բաժին չկա։

Վանահայր հրաման կէնե, որ սաղ գառ մը տան փուռ, փոր լցին բրնձով. տանին դնին քոռու յառջև, տեսնանք իգա հեղ ի՛նչ կըսեւ

Սաղ գառ օր կը դնին յառջև, կափլըփե, կըսև.

—Քոռուն օր սաղ գառ մը հանե՞ր է, ալա սաղին քանի՞ գառ է հասի։

115. ՎԱՌԵ՛, ՁԸՍ ՎԱ՛ՌԻ

Գեղացին սարեն ցորեն կը բերեր, յառջև դար ու փոս կէղնի. կը վախենա օր սել շրջի, կը դառնա դալա ուրի մաստու, կըսե.

—Է՛յ, մեռնիմ քըզի սուրբ, դիմ սել ռալամաթ յիշուս ղուղ տեղ՝ քըզի մոմ կը վառիմ։

Հակառակ՝ փշու մը կէրթա, սել կը շրջի, ջարդ ու փշուր կէղնի, խրձներ յըմեն կը ցրվին։ Գեղացին կը դառնա դալա սուրբ, կըսե.

—Վառե՛, վառե՛, չըս վա՛ռի։

116. ՎԸՐ ՊԱԿԱՍՈՒԹԵՆԻՆ

Էրկու մարդու պակասութեն յերեսով չըն կընա տա՝ ղըրնդեղի ու հարուստի։ Ջորըն-դեղեն կը վախենան, հարուստի պակասու-թեն լև հարստութեն կը ծածկե, իմալ օր ձուն կը ծածկե դաղըւ

117. ՎԻՐՈՒ ՀԱՂՈՂ ՈՒ ՏԱՆՈՒ ՀԱՂՈՂ

Վիրու հաղողն ու տանու հաղողն հըտ յիրար կը խոսենւ Վիրու հաղողն ըսեց.

—Ես քըղնև բախտով իմ, սարի վրեն, արևի տակ կը փիլամ, ես իմ գլխու տերն իմ։

Տանու հաղողն ըսեց.

—Է՜, ի՞նչ ըսիմ, դու օր իմ սլես քաղցր ու պեաքական էղներ. մարդն դքըզի չըբ թողնի անտեր։

118. ՎՌԸՇԿՈՒ ՋՈՐԻՆ

Քրաճի վռըշկու ջուրին կը փիտնա. վռշիկ դիշեր-ցերեկ գիլա, արտըսունք կը թափե, գլոքեր կը տփե, չըմքի ջուրին էր ուր տան պահող։

Դրկեցներ կը ժողվին գիկան, զմարդ կը մխիթարին։

—Մի՛ լա,—կըսին,—աստված օղորմած է, կըման ջուրի կունենաս, քըա կէնիս, զըու ճժկըներ կապըրցուսւ

Վռշիկն զգլուխ կօրորե, կըսե.

—Աստված յու՞ր կօղորմանա, էն աստ-վածն օր ես դինա՜մ, հարի քսան օսկի չառ-նև. ջուրի չիտա ընձիւ

119. ՏԱՆՁ ԴՈՒՁԵ

Տերտրոջ սիրողի մարդ կը մեռնի. տեր-տեր դիկա, օր ղթաղման կարգ կատարե. օր ներս կը մտնա՝ սիրողն յեվելի բանձր գիլա ու գիլ-գիլ արտըսունք կը թափև, չըմքի միտք էն է, օր հասկըցու տերտրոջ, օր ուր սիրտ տանձ զուզև.

—Ա՜խ, տերտե՛ր,—կըսե կնիկ,—իմ օղոր-մած հոգին մեռա՜վ, տանձի կարոտ մնա՜ց, խոնա տանձմ՝ ուտեր, նո՞ր մեռներւ

Տերտեր կըսե.

Օռշնա՛ծ, զքու մեռել լաց.
Քու փայն առած՝
խունցն է դրածւ

120. ՏԷ՛Ր ԿԵՑԻ

Վարդապետ կէրթա դեղ մը, մեկի տուն խոնախ կէղնի, յօդա չէղնի, կը քընի մըջ տանւ Գիշեր դուզե դուռ յելնա, կը տեսնա հանդե մարդ բնուկ է. կնիկ լև կշտին՝ զինք բացեր էւ Վարդապետի ըեքնեն ջուր կէրթա, կը քըպռախ, ձեռքի փեասով կը խտև մար-դունւ

—Օ՛ռշնած,—կըսե,—իդա մառմառ ջան-դակ օր վանքն յրնկնա՝ ագի տեղ կը լիգին, քու աղին տե՛ր կեցիւ

121. ՏԵՐՏՐՈՋ ԺԱՄ

Կիրակմուտ մե՝ ժողովուրդ շատ լցուկ կէղնի եկեղեցինւ Տերտրոջ սիրող լև ժամ կէղնիւ Տերտեր բուռվառք կառնե, կէրթա մըջ ժողովրդին, օր խունկ ծխե. կը կանի ուր սիրողի յառջև, վռազով վըր յիրարու բուռ-վառք կը թալե ու քթի տըկեն կըսե.

Էս գիշեր գիկա՜մ,

Էս գիշեր գիկա՜մ։

Սիրող լը վոսպով խաչ կը հանե յերեսն ու կըսե.

Կըսիս-կըսիս ու չըս յի՛գա,
Կըսիս-կըսիս ու չըս յի՛գա։

122. ՏԵՐՏԻՐՈՋ ԽՈՐՈՒՐԴ

Տանտիկին զկով կը կթե, կաթ կը դնե մեկ դեն, շուն կը հասնի, կը լակե զկաթ։

Տանտեր կըսե.

—Զկաթ թափե, ղաման լը ջարդե, հարմեր է։

—Քա ի՜մալ,—կըսե կնիկ,—իմ գողալական կթի պուտուկ ջարդի՜մ. չէ՛, սանիմ մըտ տերտեր, օշնե։

Օլոր օր կը կթե մըջ սղնձին, շունն էլման կը հասնի, կը լակե. տանտիկին ղամներ առած՝ կէրթա տերտրուշ։

—Տեր հայր, ըշտե հմլա բա՜ն. օշնե, թըղ հալալին։

Տերտեր կըսե.

—Հարամ ամներու տեղ զշուն պտի բերեր, որ գաւաղանաւ իմոյ տանէր զխրատն։

123. ՏՄԱՔԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆ

Տմաքարին հարցուցին.

—Դու յորի՞ն մինակ կուտիս զքու հաց։

Տմաքարն ըսեց.

—Տո՛, յա՜, ո՞ր կըսե ես մինակ կուտիմ, ապա իդա ճանճերն ի՞նչ ին։

124. ՏՄԱՔԱՐԻ ՕՍՅԱԹ

Շատ հարուստ մարդուց մե կը հարցուն.

—Ի՞մալ էնինք. որ հարստնանք։

—Իմալ որ ե՛ս իմ էրի,—կըսե հարուստ։

—Ի՞մալ։

—Քիչ հաց կերեք, քիչ լը դուս յելեք, կը հարստնաք, ըշտե։

125. ՏՈՒՆՆ ԻՄՆ Է

Հոր մեռնելուց յետև՝ մեծ ախպեր կըսե պզտիկին.

—Տունն ի՛մն է, քըղի փայ-բաժին չկա. գնա, իմալ գուզիս՝ ապրի։

Շատ խոսք ու զրուցք կէնին, ճարն որ կը կտրի՝ պզտիկ ախպեր կէրթա դատաստան։ Դատավոր կը կանչե մեծ ախպոր.

—Քըղի ի՞նչ իրավունք է, որ քու հորեմեկ-մորեմեկ ախպոր կը զրկիս ժառանգութենից. գնա՛, ախպորդի հալալ բաժին տու, թե չէ՝ քո՛ւմ լե կիտամ տղին։

Մեծորեք ըսեր ին.

—Էն օր ճավէու պես կը թռնա, օրներն որ կը հասնի՝ ճավու պես կը բեղե։

126. ՏՈՒՐՔՈՒՏԱՓ[1]

Չար հարուստ մե տուրքուտափ էր. կանչին զտերտորոչ, որ հաղորդ ատ, չէղնի խեղճն զմեղքեր չը քաված՝ մեռնի։

Տերտեր զհաղորդ դըեց բերան, ըսեց.

—Մեղքերուդ թողութե՛ն։ Քու վերջին խոսքըն ըսե, օշնա՛ծ։

—Իմ վերջին խոսքն է՛ն է, որ աշխար լե հըտ ընձի պտի վերջանա։

Մեծորեք ըսեր ին.—Մեռնող պինա՝ թե աշխար հըտ ուրին կը վերջանա. հմա աշխար կա ու կա՛։

127. ՔԱՂՔԸՑԻՆ ՈՒ ՇԻՆԱԿԱՆ[2]

Բիթլիսցի դուքընչին՝ մշեցու մե կըսե.

—Շինա՛կան, շինա՛կան, ըստա արի. կըռնա՞ս էսա աման ջուր պնդեցուցես, քե քյառսուն փարա կուտամ։

—Տո՛, յորի՞ն չըմ կրնա, կը պնդըցում ու մեկ լե յեվելի։

Դուքընչին աման մե ջուր ու դդալ մե կիտա շինակնի ձեռք, հավալով կէրթա ուրիշ դուքընչիք կը կանչե.

—Արե՛ք, գո[3] շինական ջուր կը պնդեցուցըս, արե՛ք քիչ մը ծիծղանք։

Շինական, դու շինական, հարի մեկել դուքընչիք գիկան՝ ղքաղքըցու շաքար, հինա, լողակ, շըբ կը լցե մըջ ամնին ու գդլով կը խառնե։

Հեռվից դուքընչին կը բոռա.

—Շինա՛կան, պնդեցուցի՞ր։

—Հա՛, հա՛. պնդեր իմ ու վըր քու հոր գնդեր իմ, արի՛ տե՛ս։

---

[1] Հոգեվարք (Ծ. Բ.)։

[2] Բիթլիսցին մշեցու ռամիկ գյուղացի լինելը ծաղրելու համար նրան «շինական» է կոչում։

[3] Ահա, ահավասիկ (Ծ. Կ.)։

128. ՔԱՄԻՆ ՈՒ ԶՈՒՆ

Քամին ըսեց ձան.

—Օր էկա՝ ի՞մալ կէնիս, զհոգիդ յու՞ր կը խլըսցուս իմ ձեռքեն։

Զուն ըսեց.

—Կը փախնիմ յոդա, կը թռնամ յոնա, կը մտնամ բարերու, պալերու տալդեն, զհողիս կաղատիմ քու ձեռքեն։

Անձրևն ըսեց.

—Ապա՝ օր ես էկա՞, ի՞մալ կէնիս, իմ ձեռքե՞ն իմալ կաղատիս։

Զուն ըսեց.

—Ջրո՛տ բերան, քու հետ ո՞ն խոսաց։

129. ՔԱՄԻՆ ՈՒ ՄԱՐԱԳ

Քամին ըսեց.

—Մա՛րագ. զդռներդի բաց, քըզի յերդ բերիմ։

Մարագ ըսեց.

—Ա՛խպեր, դու զիմ յերդ մը տա՞նի, քու յերդ բերելն ընձի պետք չէ։

130. ՔԱՄՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Քավոր կանած կէզնի գետի էս ափ, ստնահեր՝ գետի էն ափ, քալքի տիկ կը կարկըտնե. քամին կը փչե սանահոր դիուց։

Քավոր

Բարի լուս, ստ՛նահեր։

Սանահեր

Յե՞, տիկ կը կարի՞մ։

Քավոր

Սանամոր քեֆն ի՞մալ է։

Սանահեր

Սա՛զ մնաս, ջո՞ւր կէրթա ուրնե։

131. ՔԱ՞ՆԻ ՏԵՍԱԿ ՍԱՐԽՈՇ ԿԱ

Թագավոր կը հարցու իմաստունին.

—Քա՞նի տեսակ սարխոշ կա։

—Չորս տեսակ, թագավոր։ էն օր քիչ կը խմե՝ կը դառնա նռան հատ, քիչ մե յեվելի՝ մեյմուն, նա՛ շատ ու նա՛ քիչ՝ առուծ, էն օր էդ իրեքի խդեր կը խմե, կը դառնա խոզ ու մըջ ուր կեղտին կը թաբլտի։

132. ՔԱՎՈՐ ՈՒ ՍԱՆԱՄԵՐ

Քավոր կէրթա սանամոր տուն, սանամեր տկլոզ կէզնի, ամոթու կը փախնի մոնա թունդիր։

Քավոր կըսե.

—Գոցի թե չէ, իմ սանամոր թուվ մե շիլա կը ճամպիմ, ուրին շոր կարե, տկլոզ չը մնա։

Սանամեր թունդրա մեջեն կըսե.

—Յամա՞ն, իմ քավորոջ ըսեք, թըզ բարակ շիլա ճամպե, հաստ շիլա չըմ կոնա հաղնի։

Քավոր կըսե.

—Սա՛նամեր, բարակ-բարա՞կ, քընց թունդրա կողե՞ր լե բարակ։

133. ՔԻՉ Մ'ԷԼ ԿԵՌ ԷՂԻ

Տղեն հարցուց պապուն.

—Ինչքա՞ն ուղիղ էղնիմ յընկերոջ։

Պապն ըսեց.

—Շա՛տ ուղիղ, հմա քիչ մ'էլ կեռ էղի։

134. ՔՈՆԹԻ

Քոնթի էշն ու քուռակ մըջ դաշտին կարծեն, ոռձ էշ կը մոտենա, կը հոնտընտա. քածն հմալ չուֆթե մե կը ղարկե, քիչ մնա պչանեն ջնջե. ոռձ էշ կը փախնի, կէրթա հեռու։

Քուռակ կըսե.

—Մա՛մա, յորի՞ն հմալ զարկիր, օր թողեց հեռեցավ մեղք չէ՞ր օր մեր մոտ մնար՝ տղեկ կէզներ՝ ջուն-ջանավարից զմըզի կը պաշտպաներ, մինակ մանցինք, ես կը վախենամ։

Մամ կըսե.

—Լա՛ռ, մը վա՛խենա, սիրտդի մը կո՛տրի, էնի հմալ տեղե մե հոտ քաշի, օր հարի աշխարի վեռջ լե էրթա-հասնի։ էլման կը դառնա գիկա մեր մոտ։

135. ՔՈՒ ԱՉՔ ԼՈՒՍ

Գեղի խելբռին ըսին.

—Աչքդի լուս, քըզի տղեմ էղավ։

Խելառն ըսեց.

—Հայ-հու՛յ, մինակ ի՞մ աչք լուս, իմ գրկեցի աչք լե լուս։

136. ՔՈՒ ՀՈՐՆ ՕՂՈՐՄԻ

Քոռ լապտրակ կկրթա կանի գիլու բնի մոտ, դել կը խնդանա, կըսե.

—Հա՜յ, դու բարո՜վ էկար։ քու յոտքո՜վ Լկար, գինե՜ր անոթի ենք։

—Մը՛սի քու յոտքով, ըսե քու աչքերո՛վ Լկար։

—Քու հորն օղորմի,—կըսե կել,—քոռ յա Լստեղ, յա Բաղդադ։

Կրսե։ ղլաղտրակն անուշ կէնե։

137. ՔՈՒ ՄԻՏՔՆ Ի՞ՆՉ Է

Սարի դոշ՝ համպորդն ավաղակիմ կը հանդըպի։

—Կա՛նի,—կրսե ավաղակ,—յու՞ը կէրթաս։

—Տուն,—կըսե համպորդ։

—Կռնա՞ս ըսե, մարդ ե՞ր թեթև կը քելե։

—Ջըմ հասկընա, քու միտքն ի՞նչ է։

—Կը հասկըցում,—կըսե ավազակ,—օր յեվելի թեթև էրթաս, պտի զքու խուրջին առնիմ, շորերդի հանիմ, թեթըվցում, ճամպիմ տուն։

138. ՔՐԴՈՒ ՆԱՄԱԶ

Քուրդ մե դուզե նամազ էնե, զխուրլեն կը մոռնա, կշտի մարդուց կը հարցու.

—Մեր խուրլեն ո՞ըն է։

—Հտրաֆ։

—Հտրաֆ ո՞ր դեն է։

—Մեկկել իրեք կողմ մոսցի։ կը դառնաս դպա հարաֆ, զքու նամազ կէնիս։

139. ՕՁՆ ՈՒ ՄԱՐԴ

Օձն յելով դեմ մարդուն, ըսեց.

—Ի՜մալ իս, ադամորդի՜։

—Դրը հլա կը հարցու՜, քաշվի՛ իմ համպուց։

Օձն քիչ յառեչ Լկավ։

—Հ՜ը, դոռշելի, կը տեսնա՜ս իմ ձևոք։

Օձն էն վախտ զրերան բացեց.

—Կը տեսնա՞ս իմ յակոեք,—ըսեց։

Մարդ վերցուց քար մե ու ա՛ռ հա զլխուն։

—Դե դնա։—ըսեց,—քանի քու խեթոցն ու քանի իմ ձեռք կան՝ մենք մեկ յեղբ չընք յելնա։

140. ՕՍԿԻՆ ՈՒ ՀԱՎԼՈՐ

Ճետ մե մըչ աղբին օսկի մե կը դտնա։

—Կը՛չ-կը՛չ-կը՛չ, իդա ի՞նչ է։

Հավն էն դիուց կը վազե մոտ, կըսե.

—Կը՛տ-կը՛տ-կը՛տ, հե՛չ։

Մարդ դիկա, կը վերու զօսկին, կը զնե ջեբ, կը դառնա ըդոց.

—Ախմբխնե՛ր։—կըսե,—ի՛նչ կը կըշկըշաք ու կը կըտկըտաք, օր ֆիմնեք օսկին ինչ է, մըչ աղբին դարի չը դաչեք։